

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՏԱՐԵԼԻՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլի 24-ին, կիրակի.—Յիշատակ բիւրաւոր նահատակաց մերոյ, որք կատարեցան յընթացս Համաշխարհային առաջին պատերազմի, յԱրևմըտեան Հայաստան:

Ապրիլի 24-ին լրացավ Մեծ եղեռնի յոթանասունիններորդ տարելիցը: Ամեն տարի այս օրը հայ ժողովրդի բազմաթիվ զավակներ գնում են Ծիծեռնակաբերդ՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու ցեղասպանության զոհերի հիշատակին:

Տարիների թանձր մշուշն ու համայնական կարգերի ոչնչացնող մթնոլորտը չկարողացան հայի հիշողությունից ջնջել մարդկության նկատմամբ երբևէ կատարված հրեշագործություններից մեծագույնի տխուր հիշատակը:

20-րդ դարի սկզբին՝ առաջին համաշխարհային պատերազմի բոցերով բռնկված ողջ քաղաքակիրթ աշխարհի աչքերի առջև թուրք-բարբարոսը վերջնականապես լուծեց իր առջև ծառացած երկարամյա պատմություն ունեցող մի խնդիր՝ հայկական հարցը: Դեռևս սուլթան Համիդյան շրջանից էլ առաջ ծայր առած բացահայտ հայատյաց քաղաքականությունը, որն ուղեկցվում էր հայ ազգաբնակչության նկատմամբ անմարդկային ու հակազգային վերաբերմունքի դրսևորումով, առավել թունոտ գույներով վերածնվեց երիտթուրքեր կոչված բաշիբոզուկների կառավարության օրոք: Հակահայկական տրամադրությունները այժմ ավելի բորբոքվեցին, սկսվեցին հայերի մասսայական տեղահանումներ, արական սեռի ընդհանուր զորահավաք, մտավորականների ապօրինի բանտարգելություններ, մի բան, որը նպատակամղված էր գլխատելու հայ ժողովրդին՝ հետագայում հասարակ ռամիկների հետ հեշտությամբ հաշվեհարդար տեսնելու նկրտումով: Հազարավոր մայրեր՝ նորածինները կրծքերին, ալեզարդ ծերունիներ՝ ձեռնափայտերին կոթնած, և փափկասուն կույսեր քշվեցին հեռավոր անապատներ ու հոշոտվեցին մարդակերների կողմից: Ծիկացած անապատային ավազը, որ երկար ժամանակ անջրդի էր եղել, հագեցավ ու խոնավացավ հայերի արյունից: Ամեն հայ մեռնելիս որոտաց իր կարապի երգը. «Ով մարդկային արդարություն, թող որ թքնեմ քո ճակատիդ»:

Հայկական հարցում թուրքական պետության գաղափարախոսության ելակետ դարձած «Արևմտյան Հայաստանը մաքրել հայերից» կարգախոսը իրեն չարդարացնելուց հետո վերածվեց՝ «Հայերին մաքրել Արևմտահայաստանից»: Այն, ինչ դարերի ընթացքում չկարողացան իրականացնել պարսկական քեշն ու արևմտյան նենգափոխած քրիստոնեությունը, արաբական իսլամն ու սելջուկյան հրոսակները, թուրքական յաթաղանը կատարեց մի քանի օրում: Հաշված օրերի ընթացքում մորթազերծ արվեցին ու հոշոտվեցին 1,5 միլիոնից ավելի հայեր, ավերվեցին հարյուրավոր ծաղկուն բնակավայրեր ու շեներ: Մի ժողովուրդ, որն իր պատմության բերումով շա՜տ-շատ էր թափառել, կրկին ու կրկին ստիպված եղավ առնելու պահդուխտի ցուպը և սփռվելու ողջ աշխարհով մեկ՝ իր սրտի բաբախյունը միմիայն իմաստավորելով անմեղ զոհերի հիշատակը վառ պահելու և նրանց արդար արյան վերժը առնելու մոլուցքով: Հիդրայանման գիշատիչը իր ճանկերի մեջ պատառոտեց հայի մարմինը, իր գարշելի քիմքը ճաշակեց անմեղ զոհի արյան հոտը, սակայն նրա դժոխային ու արնածոր մատները չհպվեցին անգամ հայկական անվհատ ոգուն, ոգի, որը հաղթահարել էր ժամանակի հարուցած բազմաթիվ խոչընդոտներ: «Մի վախեցեք նրանցից, որ մարմինն են սպանում, այլ վախեցեք նրանցից, ովքեր հոգին են սպանում»— ասում է Հիսուս Քրիստոս: Հազարավոր հայեր իրենց նյութական գոյությամբ տրվեցին ի կեր ենիչերներին, սակայն հայի հոգին, ներաշխարհը մեկընդմիշտ անմատչելի մնաց նրանց համար: Հոգին կենարար է, այն ապրեցնելու ներուժ ունի: Ուստի, ապավինենք Հայոց անընկճելի ոգու անխորտակելի ամրություններին, մեր հիշողություններում նորոգենք բյուրավոր նահատակների աղեխարշ ճիչը և հասնենք Հայոց արդար դատի Աստվածահաճո գործի իրականացմանը:

Այս մտածումներով և հույզերով ապրիլի 24-ին, ժամը 10.30-ին, Մայր Աթոռի միաբանությունը, օրհնությամբ Վեհափառ Հայրապետի և գլխավորությամբ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, այցելեց Ծիծեռնակաբերդ և խաչակիր ծաղկեպսակ դրեց Նահատակաց հուշարձանին:

Անմեղ զոհերի անմահ հիշատակը խորհրդանշող, անմար կրակի շուրջ կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

Նույն օրը, ժամը 11-ին, Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը: «Հայր մեր»-ից առաջ մխիթարական և սրտառուչ քարոզ խոսեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

«Ահաւասիկ ես բացից զգերեզմանս ձեր և հանից զձեզ ի գերեզմանաց ձերոց, ժողովուրդ իմ» (Եզ. ԼԷ 12):

«Ահավասիկ պիտի բացեմ ձեր գերեզմանները և պիտի հանեմ ձեզ ձեր գերեզմաններից, ո՛վ իմ ժողովուրդ»:

Աստվածաշնչի մեծ մարգարեներից Եզեկիելը հրեա ժողովրդի ամենածանր ու դժբախտ օրերին, ի տես իր ժողովրդի դառն ճակատագրի և նա-

հատակության, ի վերուստ իրեն շնորհված հետևյալ տեսիլքն է ունենում: Այդ տեսիլքում Աստված, մարգարեի ձեռքից բռնելով, առաջնորդում է նրան մի ընդարձակ դաշտ, ուր բյուրավոր մահացած մարդկանց չորացած ոսկորներ էին լցված մի հսկա տարածության վրա՝ նման հատված անտառի: Աստված մարգարեին ցույց տալուց հետո բյուրավոր նահատակների և զոհերի լեռնացած ոսկորները՝ ասում է. «Մարգարեացի՛ր և կյա՛նք պարգևիր այս չորացած ոսկորներին»: Եզեկիելը զարմանքով նայում է իր Աստծուն. նրա պաղատալից հայացքի մեջ նկատվում էր նրա անկարողության զգացումը, և թե Աստված ինքը միայն կարող է կյանք պարգևել և հարության շունչը տալ այդ չոր ոսկորներին: Բայց Աստծու կամքով Եզեկիելը մարգարեանում է և դաշտում գտնվող չորացած ոսկորները մկան, միս ու մաշկ են ստանում: Վերստին Աստված հրամայում է. «Շո՛ւնչ տուր դրանց»: Ի՜նչ հրաշալի տեսարան. դաշտի ամբողջ տարածքում ոսկորները կերպարանափոխվում, մարդ են դառնում՝ շունչ ու հոգի ստանալով, այդպիսով: Նույնպիսի մի հրաշքի ականատեսները եղանք մենք, երբ ձմեռվա մեռյալ բնությունը գարնան շնչով վերակենդանացավ:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ: Այսօր, ապրիլի 24-ի առավոտյան, հավաքվել ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դարավոր այս սուրբ տաճարի կամարների տակ՝ ոգեկոչելու անթառամ հիշատակը Մեծ եղեռնի մեր նահատակների: 1915 թվականից մինչև այսօր ամեն գիտակից հայ, աշխարհի որ ցամաքամասում էլ գտնվի, մի պահ անպայման իր սրտի խորքում անդրադառնում է և աղոթում իր նահատակների, իր անմեղ զոհերի հոգիների համար: Այսպիսով նրանց հիշատակը, նրանց հավատն ու հայրենասիրությունը մեծարում ու պանծացնում է՝ վերհիշելով նրանց անչափ զոհողությունը:

1876 թվականին, երբ Սուլթան Համիդը գահ բարձրացավ, դաժան և անգիջող քաղաքականություն սկսեց վարել Թուրքիայում ապրող բոլոր ազգային փոքրամասնությունների նկատմամբ: Այն ժամանակ Թուրքիան Օսմանյան մեծ կայսրություն էր, նրա գերիշխանության տակ էր գտնվում նաև ամբողջ արաբախոս աշխարհը: Նա ոչ միայն իր կայսրության սահմաններում ապրող քրիստոնյա ժողովուրդներին, այլ նաև ամբողջ արաբ ժողովրդին մարդկային մեծ վնասներ հասցրեց իր հալածանքներով և կազմակերպած ջարդերով: Սուլթանը հատկապես ատելությամբ էր լցված հայ ժողովրդի հանդեպ, որովհետև վեց հարյուր տարիներ շարունակ Օսմանյան լծի տակ հեծող հայ ժողովուրդը իր հողն ու հայրենիքը ունենալու ազնիվ երազանքն էր փայփայում և արդարացի կերպով ձգտում ազատության ու անկախության: Բնական է, հայ ժողովրդի անկախության այս ձգտումը բացարձակապես հաճելի չէր կարող լինել Սուլթան Համիդի համար: Օսմանյան պետության սահմաններում գտնվող մի շարք արաբ և եվրոպացի ազգեր ժամանակի ընթացքում բուռն պայքարով կարողացան իրենց ազատությունը ձեռք բերել: Այս իսկ պատճառով Համիդը դարձավ ավելի վայրագ ու դաժան: 1895—96 թվականներին հսկայական չափերի ջարդեր կազմակերպելով նա ուզում էր Արևմտահայաստանի զանազան գավառներում՝ վերջնականապես լուծել հայկական հարցը: Այս առթիվ հայկական գավառներում բյուրավոր հայեր նահատակվեցին: Ավելի ուշ, 1908 թվականին, տեղի ունեցավ Ադանայի մեծ ջարդը: Այսպիսով Կիլիկիայում ևս թափվեց տասնյակ հազարավոր հայերի անմեղ արյունը:

Սուլթանական բռնակալությունը տապալող Իթթիհատական կուսակցությունը, որ 1908 թվականին Թուրքիայի իշխանությունն իր ձեռքն էր վերցրել, խղճի ազատության, արդարության և եղբայրության կոչերով խոստանում էր բացահայտորեն Թուրքիայի բոլոր փոքրամասնություններին տալ հավասարասար իրավունքներ: Սակայն դժբախտաբար, սրանք ևս ազգայնամոլ զգացումներով կուրացած՝ դրժեցին իրենց խոստումները և սկսեցին փոքրամասնության դեմ գաղտնի դավեր նյութել և կոտորածներ կազմակերպել:

Երբ Թուրքիան ներգրավվեց Առաջին համաշխարհային պատերազմի մեջ 1914 թվականին, հաջորդ տարին հայերին զանգվածաբար տեղափոխեց դեպի կենտրոնական Անատոլիա, իբր թե առաջն առնելու համար հայերի ռուսական կողմնորոշման վտանգին և ապահով կերպով կռվելու Դարդանելի ափերում տեղակայված Համաձայնական ուժերի բանակների դեմ:

1915 թվականից մինչև 1918 թվականը հայերը բռնի գաղթի ենթարկվեցին, աքսորվեցին դեպի անջրդի անապատներ և ամայի տարածություններ: Աքսորի ճանապարհին անօթևան, ծարավ և անվաղ մնացին բազմահազար հայեր և մեռան: Այն, ինչ սովն ու կիզիչ անապատները չէին կարողանում անել, արյունարբու թշնամին կատարում էր իր գազանային անսպառ երևակայությամբ, կանխամտածված և մշակված ոճիրներով: Այսպիսով մոտավորապես մեկուկես միլիոն հայ ոչնչացրին Իթթիհատականները կենտրոնական Թուրքիայում և սիրիական անապատներում:

Քիչ առաջ, մեր ժողովրդի հետ, Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ և մաղթանքներով, Մայր Աթոռի զինվորյալ միաբանությամբ բարձրացանք Ծիծեռնակաբերդի Ապրիլյան հուշակոթող՝ կատարելու մեր ուխտը, թարմ ծաղիկներ դնելու նահատակների հիշատակի խորանի առաջ և մեր աղոթքը մրմնջելու: Հուշակոթողի առաջ հոգեհանգստյան պաշտոն կատարեցինք նրանց հոգիների խաղաղության համար:

Մեր նահատակների անկատար երազը, ազատ ու անկախ հայրենիք ունենալու, այսօր իրականացած ենք տեսնում: Մեր ժողովուրդը Սարդարապատի 1918 թվականի Մայիսյան մարտերից մինչև այսօր արդարության իր իրավունքների պաշտպանության համար մարտեր է մղում: Մենք հավատում ենք, որ եկող տարիները այս նպատակի իրականացման ճանապարհին պիտի լինեն արդյունավետ:

Այսօր, երբ մենք հավաքված ենք Ապրիլյան մեր նահատակների հիշատակը վերստին ոգեկոչելու, նրանց հիշատակով ապրելու, անհրաժեշտ է, որ այս սրբազան վայրում, ուր Աստվածորդին իջավ և օրհնեց, ուխտ կատարենք մեր երիտասարդության և ամբողջ ժողովրդի հետ՝ հավատարիմ և տեր կանգնելու մեր դատին, հայրենի ժառանգությանը, մեր հայրենիքին, մեր Եկեղեցին և մեր հավատին: Մեր հայրենիքը, մեր հողը մեր նահատակների արդար ու անմեղ արյամբ են սրբացած և դրանով իսկ դարձած ամենաթանկը այս աշխարհում:

Այսօր, Զատկին հաջորդող չորրորդ կիրակին, մեր հայրապետների կողմից կոչվել է Կարմիր կիրակի: Նրանք Կարմիր կոչումն են տվել, որովհետև Եկեղեցին նահատակների կարմիր արյամբ սրբագործվել և իր հիմքերը ամրորեն հաստատել է հողի մեջ: Մեր նահատակների կարմիր արյամբ է ոռոգվել հողը և դրանով արգասավորվել: Պատահական չէ, որ մեր սրբերը ասել են՝ «Արյուն մարտիրոսաց սերմն Քրիստոնեից»: Այսօր այս խոսքերը որքան այժմեական իմաստ են ստանում մեզ համար:

Սիրելի հավատացյալներ, քիչ վերջ Էջմիածնի վանքի շրջափակում կանգնեցված Ապրիլյան եղեռնի հուշարձանի առջև միասին հոգեհանգստյան մասնավոր պաշտոն ենք կատարելու: Այս առթիվ ևս աղոթենք մեր նահատակների հոգիների համար: Աղոթենք մանավանդ, որ Աստված մեր հայրենիքը պահի խաղաղության մեջ, շենության և բարգավաճման մեջ: Թող Նրամ առաջ արցախյան մարտերը արդար լուծում գտնեն, և մեր արցախցի ժողովուրդը մեզ հետ շարունակի ապրել ստեղծագործ և շինարար նոր կյանքով:

Թող մեր նահատակների հոգիները խորհրդապես իջնեն այսօր մեր մեջ, վերանորոգեն մեր հայրենասիրությունն ու նվիրումը, խթանեն մեզ մեր ծառայության ճանապարհին, որպեսզի նվիրումով ծառայենք մեր օրհնյալ Տիրոջը, Նրա հիմնած սուրբ Եկեղեցուն և մեր պարեպաշտ ժողովրդին այժմ և հավիտյանս:

«Ահաւասիկ ես ածից ի վերայ ձեր շունչ կենդանի» (Եզեկ. ԻԷ 5). Ամեն:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հավարտ ս. պատարագի, գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի գլխավորությամբ, եկեղեցական թափորն առաջնորդվեց դեպի Մայրավանքի շրջափակում վեր խոյացած Մեծ եղեռնի զոհերի հուշարձան, ուր հոգևոր շարականների երգեցողությամբ կատարվեց հոգեհանգստյան հանդիսավոր պաշտոն: